ցաւ ոչ թէ ուսեալ պրօֆէսօրը, ոչ թէ պ. Ագօլֆի վապնէր, այլ Բիւմարկի ծառան, նրա խօսոց մեքենան։ Նոյն միմակն ևս իթարկվեցաւ և երևելի եռաբոյրեր նա իր կանգիդատութեան ընտրողական գրեթէ 8 շրջաններին առաջարկեց։ Ամեն տեղ ցոյցեր էր գործում, կաշառում էր և այլն և վերջ ի վերջոյ ամեն տեղ էլ յաղթվեցաւ։ Միայն մի յիսը ընկած տեղ, Սախսենխայլ տահմանի մօտ Մինդենի մէջ նա տրժանացաւ կրկնաքուէարկութեան։ Մնացած շրջանների մէջ, նոյնպէս և Բերլինում, ուր հազարներ ծախսվեցան նրա ընտրութեան համար, շաբաթներ յաղթվեցաւ։ Իշխան Բիսմարկի օրդի յայտնի կոմս Վիլհելմ Բիսմարկն էլ յաղթվեցաւ։ Կասկածաւոր է, որ վերջինը մի որ և է տեղ կարողանայ ընտրված լինել։ Մի խօսքով ընտրողների յարաբերութիւնը դէպի պահպանողականները ազատ ցուցին առաջիններին թշնամութիւնը իշխան Բիսմարկին։ Գլխաւոր յաղթողները ազատ ջոգէնիներն են։ Ագգայինապատասխանները առանձին աջողութիւն չունեցան։ Ընտից գլխաւոր առաջնորդ Բենիգսեն ընտրվեցաւ ընդամենը 200—300 քուէներով մեծամասնութեամբ։ Բայց հարաւային-գերմանական կուսակցութիւնը, որ առաջ բայխատագի մէջ միայն 5 անդամներ ունէր, այժմ 14 անդամ կունենայ։ Պէտք է նկատել, որ այդ կուսակցութիւնը ամենազգաստամիտն է և նա ընդդէմ է ոչ թէ միայն իշխան Բիսմարկի ինքնիշխանութեան, այլ և Պրուսիայի առաւելութեանը գերմանական միւս պետութիւնների առաջ։

Ամենքի համար պնազանդի էր ազգիւղդէմոկրատների աջողութիւնը։ Նոյն իսկ այդ կուսակցութեան անդամները գանգատվում էին, որ իրանց կազմակերպութիւնը խանգարված է։ Բայց գործնականապէս յայտնվեցաւ, որ, չը նայելով ամեն տեսակ ճնշմանը և հալածանքներին, որին նա ենթարկվել է երկար տարիների ընթացքում, մինչև անգամ ընտրութիւնների ժամանակ, այդ կուսակցութիւնը բոլորովին ճնշված չէ։ Ցայտնի է, թէ ընտրութիւնների ժամանակ կառավարութիւնը ինչպէս էր վարվում ազգիւղդէմոկրատների հետ։ Չը նայելով ուղղակի օրէնքին, նրանց ոչինչ թոյլ չէր արվում։ Նրանց մինչև անգամ արգելքներ յայտնել լրագրների մէջ, թէ այս ինչ կանգիդատը առաջարկվում է այն ինչ ընտրողական շրջանին։ Մի շարախ առաջ կալանաւորվեցան երկու լրագրներ, որոնք այդպիսի յայտարարութիւն էին տպել։ Ազգիւղդէմոկրատները ստիպված էին բաւականանալ իրանց կանգիդատների անուններով ընտրողական բիւլետին յայտնելով։ Չը նայելով այդ արգելքներին, ազգիւղդէմոկրատները մեծ աջողութիւն ունեցան, որ ամենքին զարմացրեց։

ՀԱՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 Նոյեմբերի։ Նոյեմբերի 2-ին էկսպերտները վճռեցին, որ գաղթականները պարտաւոր են յանձնել հասարակութեանը իրանց հողերը, եթէ նա կընդունի պետական և տեղական հարկերը։

ՓԱՐԻԶ, 2 Նոյեմբերի։ Գիվի հասարակաց առաջարկված միևնարարութիւնը. գամբետա նախագահ և արտաքին գործերի մինիստր, ունենալով Ասիլլերին գլխաւոր քարտուղար, Բուասօ՝ ներքին գործերի մինիստր, Գօլ Բեր՝ ժողովրդական լուսաւորութեան, կամպենէօն՝ պատերազմական, Ալեն Պարմիէ ֆինանսների, Լայնօլ՝ հասարակական աշխատանքների, Կոշըրի՝ փոստային, Բուլմէ՝ առևտրական և գաղթականութեան, Կազօ՝ արդարութեան, Գուժար՝ ծովային, Դևիվ՝ երկրագործութեան, Պրասա՝ արուեստների և արհեստների։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 Նոյեմբերի։ Նիհապերատորը նոյեմբերի 3-ին վճռեցին. գինու տահկան որոշում է նահանգական գեմստվոյի ժողովը, պահպանվելը քաղաքների մէջ և գինու գործարանների մօտ ապատ են, գինիների մէջ իրոյլ են արտաքսի գանազան գեմստվոյներից։ Ընտարակութիւնները կազդող են արգելել պահեստները։ Խմիչքների գործին մասնակից անձինք կարող են վճռարանել, բայց չեն կարող քուէարկել խմիչքների հարցերը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 Նոյեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր., երկրորդ 92 ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 91 ր. 5 կ., հինգերորդ 91 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 220 ր. 5 կ., երկրորդ 214 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը 90 ր. 50 կ., երկրորդ 90 ր., երրորդ 89 ր. 87½ կ., ոսկի 7 ր. 65 կ.։ Ռուսաց 1 րուբլ լօնդօնի վրա արժէ 25,81 պէնս, Ամստերդամի վրա արժէ 130,50 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 220 մարկ 62 պֆ., Փարիզի վրա 272 ֆր. 87 սանթիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ Ա Ժ Շ Կ Ա Ն Ո Ց

Հիւանդների ընդունելութիւնը Թիֆլիսի քաղաքային բժշկանոցում լինում է 9—1 ժամը։

Ամեն օր Թիֆլիսի քաղաքային բժշկանոցում ընդունում են հիւանդներին հնուանի բժիշկները.

Ն ե ր ք ի ն 9—10 ժամը խիրուրգիական, սիֆիլիտիկական և կաշու հիւանդութիւնների։ Գ ա ն ի է լ կ օ վ և Լ ի ս ի ց ե վ 10—11 ժամը ներքին և ջղային հիւանդութիւնների։ Գ ա վ ր օ ն ա կ ի 11—12 ժամը մանկաբարձական և կանանց հիւանդութիւններից։ Կ օ պ ե ի ն օ վ ի ց 12—1 ժամը սիֆիլիտիկական և ներքին հիւանդութիւնների։ Բացի այդ Գ օ լ ո վ ի ց երկուշաբթի օրերը ներքին հիւանդութիւններից։ Մ ի ն կ ե վ ի ց երեքշաբթի և ուրբաթ օրերը 9—10 խիրուրգիական հիւանդութիւնների։ Վ ե ր մ ի շ ե վ ի ց երեքշաբթի և ուրբաթ օրերը 10—11 ժամը ներքին հիւանդութիւնների։ Ր է յ խ երեքշաբթի և շաբաթ 10—11 ժամը աչքերի հիւանդութիւններից։ Բ ա բ ա յ ի վ երեքշաբթի և շաբաթ 12—1 ժամը ջղային և ներքին հիւանդութիւնների։ Ֆ ր է չ ա ն ց 1-ն չորեքշաբթի օրերը 11—12 ժամը խիրուրգիական, ականջի և բացյին հիւանդութիւնների և շաբաթ օրերը սիֆիլիսի միջոյին-սեռական օրգանների հիւանդութիւնների։ Տ ա բ խ ա ն օ վ երկուշաբթի, չորեքշաբթի և շաբաթ 11—12 ժամը ներքին հիւանդութիւնների։ Կ ի ն բ ժ իշ կ Ր օ բ ր ու լ երկուշաբթի և հինգշաբթի 12—1 ժամը կանանց հիւանդութիւնների։

Օ բ ր ե խ ա տահմի ցաւ ունեցողներին ընդունում է իր տանը ամեն ժամանակ պղտոր հիւանդներին բժշկանոցի տոմսակով։ Ամեն օր բացի կիրակիից բժշկանոցի մէջ լրիւ է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար։ Բժշկանոցի գիրեկտօր։

Դ. Լիսիցեվ

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԼԺԱՆ քան թէ ուրիշ տեղ. թէյ, կակաօ, շօկոլատ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, ծաժանկներ, իօկալներ, թէյ յատաններ, սուրճօներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երևելի լուսաւորութեան ամաններ, ԿՈՂԳԼՈՒՆԵՐ, ՋԳՆՏԱԿԱՒՆԵՐ, դպալներ, գանակներ, ԳՐԻՉՆԵՐ, թաղթի, ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԼՅՕՎԵՐՆԵՐ, ՄԶՔԱԿԱՊՆԵՐ, կլէօնկա, ԹԱՄԲՈՒՐ, ասեղներ, ուխօներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, երեսպրիչներ, թաշկինակներ, կանանց գուլպաներ, մարդկերանց գուլպաներ, առատ տապօ, հոտաւէտ ջրեր, շերբետ, ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտվէյն, խերես, կօնիակ և 1,000 այլ առարկաներ։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։ ՆՈՅՆ ՏԵՂԸ վաճառականներին ՄԵԾ քանակութեամբ ծախում է ԹԷՅ։ պուդերով 40, 46, 52, 58, ր., խակ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., խակ ամենաբարձր ԹԷՅԸ ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ։

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ՁՕԿ-ՒՕՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., լէվօլվերներ 4—34 ր., ՌՈՒԼԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թաղ թեր 65 ր., շեֆիլդի դանակներ 3 ր. 50 կ. գիւժինը, սլրօցներ կիսագոնով, ֆիլտրաներ և այլն, ամենամեծ պահեստ հրացանների և լէվօլվերների թիֆլիսում։

43—100

ԹԷՅ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՁԱՆԱԶՈՂՆԵՐԸ պէտք է գնեն ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ԹԷՅ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ ԹԻՖԼԻՍՈՒՄ, որպէս մի իսկական անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ ԹԷՅի համեմատական ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ։ Բացի այդ անգլիական խանութը կշռում է ՄԱՔՈՒԻՐ ԹԷՅ առանց ԹՂԹԻ և ԱՐՃԱԽԻ։

78—100

ՀԱՑՈՑ ԼԵԶՈՒԻ, ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ գասեր ընտանիքներում ՀԱՐՑՆԵԼ „ՄՂՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ։

ՆՈՐ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ԳՐԵԱՆՔ

Որոնք վաճառվում են ՋԱՖԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ „ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

1	Բագրատունի՝ Տաճն պատագամբ. գինն է	25 կ.
2	Ագայեանց՝ Անահիտ, Հին գրոյց.	50 „
3	Թզուկ, թարգ. Տէր-Միքայէլեանցի.	30 „
4	Աղքատ մեծուկ կամ բարոյական վէպ.	20 „
5	Խոխլ արալա Սունդուկեանցի.	50 „
6	Ջոլա մանրավէպ Տէր-Աւետիսեանի.	20 „
7	Հայերէն լաւոս երեխաների համար.	50 „
8	Տէր-Ակոբեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն.	60 „
9	Կատանեանց՝ Գրաբառ բայերի խոնհարումը.	25 „
10	Թագուրեան՝ Փոքր լեզուագիտական հետազօտութիւն.	50 „

Նոյն տեղից ստացուել է Լոտոյի Տէր-Աբրամեանցի 1882 թուի ՕՐԱՑՈՑՑ, գինն է 15 կօպ. գումարով առնողներին զիջումն կը լինի։

ՎԻՆՆԱՑԻ ՄԵԲԷԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և ժեներ, միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում ՄՂՇԱԿԻ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

98—150

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

Գ ա ս ա գ ր ք ե ր ի

1.	Ագայեանց՝ Ուսումն մայրենի լեզուի, ա. ա. շորր. տպ.	20 կ.
2.	Տէր-Դաւիթեան՝ Русское Слово, հինգեր. տպ.	45 „
3.	Կատանեանց՝ Ծաղկաքաղ շրջան Ա. (գրաբար)	60 „
4.	„ „ „ շրջան բ. (նոյնպէս)	40 „
5.	„ „ „ շրջան գ. (նոյնպէս)	40 „
6.	„ „ „ գրաբառի հոլովումն	15 „
7.	„ „ „ գրաբառի խոնարհումն	25 „
8.	Տէր-Յակոբեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն.	60 „

Ընթերցանութեան գրքեր՝

1.	Ագայեանց՝ Անահիտ, Հին գրոյց.	50 „
2.	Արս. ք. Բագրատունի՝ տաճն պատագամբ	25 „
3.	Տէր-Միքայէլեան՝ Թզուկ, թարգ. Դօդէից	50 „
4.	Ալայեան՝ Ահմէդի տօպրակը	10 „

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ.

Մատուցի տակ են՝ Մանդինեանցի „Նահապետական“ և „Դիւցազնական“ աշխարհնիները և Տէր-Ղեւոնդեանի՝ „Մայրենի լեզու“ երկրորդ տարին։

Շուտով մատուցի տակ կը մտնի՝ Սրբազան պատմութիւն հին կտակարանի Հայոցդու։

Ընդլիական երկաթեայ պատենատած ՏՐՕՐՆԵՐ, լեմֆերների պաշարով Բանասմի փաբրիկայից, ծախվում են գործարանական գներով ՊԻՎՕՎՐՕՎԻ և ԳՕԼԻՒԼԻՒՍՏԻ կառատրայում Թիֆլիսում, Ալեքսեևսկայի փողոցի վրա Ընծրունու գալէրէում № 188

15—20 (2)

Дозволено цензурою, Тифлисъ 5 Ноября 1881 года. Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго